

ՏԱՍՆԵՐԿՈՐԻ ՏԱՐԻ

ՄԵԼԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարվանը 6 ռուբլ:
Առանձին համարները 5 կոպէկով:

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ:

Օտարաբաղադրացիք գիմում են ուղղակի
Тифлисско-Редакція «Мелк»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերից):

Յայտարարութիւնը ընդունվում է ամէն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԴՐԱԿԱՆԱԿԱՆ

„ՄԵԼԿ“

ԱՄԵՆՈՐԵԱՅ ԼՐԱԳԻՐ

(ՏԱՍՆ ԵՒ ԵՐԲՈՐԻ ՏԱՐԻ)

ԱՌԱՋԻԱՅ 1884 ԹԻՒՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՎԻ ՆՈՅՆ ԴԻՐՔՈՎ ԵՒ ՆՈՅՆ ՊՐՕԳՐԱՄԱՅՈՎ

ՊՐՕԳՐԱՄԱՅ

I. ՏԵՐԻՈՒԹԻՒՆ ԿԱՐԳԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ: II. ԱՌԱՋՆՈՐԴՈՂ ՅՕԳՈՒՄՆԵՐ: III. ՆԵՐՔԻՆ ՏԵՐԻՈՒԹԻՒՆ: Ընդհանուր յօդուածներ, թղթակցութիւններ, լուրեր: IV. ԱՐՏԱՔԻՆ ՏԵՐԻՈՒԹԻՒՆ: Ընդհանուր յօդուածներ, թղթակցութիւններ, լուրեր: V. ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ: VI. ՀԵՌԱԳԻՐՆԵՐ: VII. ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ: Ֆէլիետօն, վէպեր, ինքնուրոյն և թարգմանական յօդուածներ, գիտութեան ամեն ճիւղերից, թղթակցութիւններ: VIII. ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ: ԲԱՃԱՆՈՐԴԱԳԻՆ: Տարեկան 10 ռուբլ, վեց ամսվայ 6 ռուբլ, իւրաքանչիւր ամսվայ 1 ռուբլ: ՀԱՏՈՎ համարները 5 կոպէկ:

ՀԱՅՏԻՆ. Тифлисско-редакция «Мелк».

Խմբագիր—Հրատարակող ԳԻՐԳՈՐ ԱՐՇՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՐԻՈՒԹԻՒՆ: Նամակ խմբագրին: Նամակ խմբագրին: Նամակ խմբագրին:—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՐԻՈՒԹԻՒՆ: Նամակ թիւրքերից: Արտաքին լուրեր:—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ:—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ:—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ: Ֆիլետօն և իւրաքանչիւր ամսվայ 1 ռուբլ:

ՆԵՐՔԻՆ ՏԵՐԻՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Ալեքսանդրապոլ, 1 նոյեմբ.

Երբ ծագում է մի հարց, այնքան պէտք է խօսակցել, որ հարցը ընթերցողների համար պարզ լինի: Այս կէտից նայելով դառնում եմ մամուլին հետեւեալ հարցերով:

1. Ինչպէս հաստատ աղբիւրներից գիտեմ, պ Պոչտանցը արգելում է իր թիւնը ուսուցիչներին, որ մասնաւոր մարդկանց գեղծութիւնների մասին ոչինչ չը գրեն լրագրերին, որովհետեւ, պարոնի կարծիքով, այդ մասնաւոր մարդիկ, թշնամանա-

լով ուսուցիչ թղթակցի հետ, իրանց վրէժը դրողից են հանում, դպրոցին են վնասում: Հարց. հարկաւոր է գրել մասնաւոր մարդկանց գեղծութիւնները, որոնցից վարակւում են շատերը և վնասում են ընդհանրութեան, թէ պ. Պոչտանցի վճիռը պէտք է ընդօշնակ որպէս աստուածա-լին պատգամ:

2. Պոչտանցի թիւնը ուսուցիչները իրաւունք ունեն պ. Պոչտանցի թէ գեղծութիւնների և թէ նրա վնասակար պաշտօնավարութեան մասին գրելու, խօսելու: Եթէ իրաւունք չունեն, թող մամուլը պարզէ այդ հարցը ուսուցիչների համար, որ ամենքն էլ կուրախան, իւրանան և անդգայ դառնան, որ չը տեսնեն պ. Պոչտանցի այս և այն գեղծութիւնները և իդուր չենթարկվին նրա անգութ հայածանքերին:

3. Լոյսի պէս պարզ ճշմարտութիւն է, որ պ. Պոչտանցը «Մշակի» 121-ում տպած Ղարաբլի-լիսայի նամակի ստիժով հեռացրեց ուսուցչու-թեան պաշտօնից Պ. Ս. Տ. Մ. ոչ միայն Ղարաբլի-լիսի դպրոցներից, այլ չըջարեալականներով ար-գելել է և ոչ մի տեղ իրաւունք չէ տալիս պաշ-տօն գտնելու: Մինչև անգամ ուրիշ թիւներին էլ է գրել: Հարց. պ. Պոչտանցը իրաւունք ունե՞ր

աղբիւրի յանցանքի համար աղբիւրի սարսափ-լի պատիժ նշանակել մի ուսուցչի, որ 15 տա-րի ժրջանութեամբ ծառայել է հայ դպրոցներին: Պ. Պոչտանցը իրաւունք ունե՞ր ասանց Սինօղի գիտութեան այդպիսի անխիղճ չըջարեալականներ հրատարակել:

4. Ղարաբլի ընդարձակ վիճակով մինչև ցայ-սօր դեռ ոչ մի անգամ պ. Պոչտանցի երեսը տեսել չէ: Անցեալ տարի Ղարաբլի դպրոցները ինչ-յուսաճառ դրութեան մէջ էին, այդ աշխարհին յայտնի եղաւ. շատերը դանազան միջոցներով աշխատեցին օգնել Ղարաբլի դպրոցներին: Բայց պ. Պոչտանցը ականջները խցել էր, ոչինչ չէր ուզում լսել և իր կողմից ոչ մի թոյլ միջոց չը դրանց այդ դպրոցներին օգնելու համար: Բայց այս տարի չըջարեալականներ է ուղարկում այդ դպրոցների վարչութեան, որ պ. Սարգսէյ Տ. Մե-լիսիսի կանանցին չընդունեն ուսուցիչ: Ինչպէս երևում է, պ. Պոչտանցը իրաւունքներ բանա-նելու մէջ ամեն բոլոր արթնն է, բայց պարտա-կանութիւններ կատարելու մէջ միշտ քնած: Ահա ապացոյցներ:

Ալեքսանդրապոլի դատաւարի իշխանութեան տակ գտնվում է 160 գիւղ: Այս 160 գիւղի մէջ հազիւ կարելի է 10 դպրոց ձարել, որոնք եր-բեմն վրակվելով, երբեմն բացվելով մի կերպ քաշ են զալիս և դրանք պ. Պոչտանցի իշխանութե-անց շատ առաջ գոյութիւն ունեն: Ինչ է արել պ. Պոչտանցը իր տեսլութեան ժամանակ, թող մի համառօտ հաշիւ գրէ: Միայն Ալեքսանդրապո-լի վիճակի, Ղարաբլի նահանգի, Շիրակայ, Ապարա-նի, Փամբակի վիճակների վրա սխալ չը գրէ, որովհե-տեւ ես մանրամասնաբար գիտեմ յոյժ կայ, որ-քան դպրոցներ է փակել, ինչ խռովութիւններ է գցել: Իսկ ինձ անծանօթ վիճակների մասին ինչ-քան ուզում է թող գրի, ինչքան ուզում է թող գովի իրան: Հարկաւոր դիւղերի անուանի կա-րող եմ չարել այստեղ, որ պ. Պոչտանցի թե-մում են, բայց թեանական տեսուչը երեսները ան-գամ տեսել չէ:

Թող Սինօղը դատաւարից տեղեկութիւն հաւա-քէ, այն ժամանակը կը համոզուի, որ պ. Պոչ-տանցը երբեք մի կօպէկի օգուտ չէ տուել և չի էլ կարող տալ:

5. Թեմական տեսուչները պէտք է լինեն փոքր ի շատէ մանկավարժ, որ իրանց տեսլութեան տակ գտնուած դպրոցները ուսուցիչներին հարկա-ւոր ուղղութիւնը տան, թէ դրա միայն մի տե-

արդեօք, որ նա սիրելի լինի, թէ բաւականա՞նում ես միայն նրանով, որ նա դառնար քո կինը: Արդեօք ակտիւօք է լինի, որ նա, իր ցանկութեան հակառակ, դառնար քո կինը, թէ աւելի լաւ ես համարում դու, որ նրա սիրտը պատկանէր քեզ, իսկ ինքը լինէր մի ուրիշի կին: Ես այդ բոլորը կարողացայ քննել. ես բաւական ժամանակ ունեի քննելու: Եւ այդ բոլորից այն հարցն է ծագում, թէ ինչ նմանութիւն կայ մարդու և անասունի մէջ: Ինչ-պէս ամեն տեղ, այնպէս էլ տղամարդի և կնոջ մէջ կանգնած է լինում ինքը կեանքը: Հասկանո՞ւմ է քո մի ասածը:

—Ոչ: Ես սկսեցի հակառակ, թէ ինչով պիտի յան-գին նրա դատողութիւնները, և զարմացած նո-յում էի նրա վրա: Նա դրողւած դրութեան մէջ էր գտնվում, նրա աչքերը փայլաւորւած էին, և այն խօսում էր նա լաւ, իր բոլոր համոզմուն-քով, որը յատուկ է մեր ժողովրդին:

—Ի՞նչ գիտե՞ք, թէ ինչ սովորելի ես, երբ գին-ւոր էի:—Արհամարհե՛լ մահ: Աւելի լաւ ես կը լինէր, եթէ ես սովորէի ցանկանալ և որոնել մահ: Մեր բոլոր դժբախտութիւնը կեանքի մէջ է, ինչպէս և կանանց հետ պատահած դժբախտութիւնը յառաջ է գալիս մեր ունեցած սէրից դէպի կեանքը: Որ-քան էլ և դժբախտ է այդ կեանքը, այսուամենայ-նիւ, մենք չենք խնայում ամեն ջանքեր նրա հա-մար միայն, որպէս զի կեանք վայելե՞նք: Եթէ ես

սակ զահճներ են խղճ վարժապետների դը-խին: Իսկ ինչ վերաբերում է Պոչտանցին, դա ոչ միայն մանկավարժ չէ, այլ հոտն էլ չէ առել: Առաջարկելով այս հարցերը մամուլի արդարադա-տութեան, ես վերջացնում եմ նամակս հետեւեալ տողերով:

Պ. Պոչտանց, երթալիցդ որ պ. Սարգսէյ Տէր-Միլիսիսից հեռացրելով դրելով «Մշակի» № 121-ում Ղարաբլիսայի նամակը, ձեր դէմ մի յանցանք գոր-ծեց, բայց դուք ի՞նչ խղճով այդպիսի ծանր, այդ-պիսի անտանկի պատիժ էք նշանակում, գրելով նրան ամեն տեղի ուսուցչութիւնից: Միթէ այդ ուսուցչի համար քիչ բարոյական պատիժ էր, որ գրելեցի նրան Ղարաբլիսայի դպրոցներից, որ դրանով չը բաւականացած, ձեր բոլորեքս կրե-րին բաւականութիւն տալու համար, բոլոր դպ-րոցներում արգելում էք:

Ձեզ եմ հարցնում, պ. Պոչտանց, մի մարդ, որ 15 տարի է միայն ուսուցչութեամբ է պարապել, որ էլ ուրիշ արուեստի ոչ մի միջոց չունի, որ գնա, ինչ անէ, որ այդպէս անդթութեամբ բոլոր դռնե-րը նրա առաջ փակւում էք: Եւ այդ սարսափելի վճիռից յետոյ միթէ կարողանում էք գիշերները հանգիստ խղճմանքով քնել: Մի բոլոր թող տես-չութեանդ բարձր ամբիոնը, մտիւր այդ հայածած ուսուցչի դրութեան մէջ, երեկայից որ անգործ ես, ամսի գլխին ոչ մի տեղից ուժեղ առնելու չես, իսկ գերդաստանդ հաց է ուղում, ինչ կը լինի քո գրութիւնը, ինչ կը պատահանես գերդաստանդ: Պ. Պոչտանց, մի լսիւր կրե՛րիդ, խղճիդ խայթին ականջ արա:

Ալեքսանդրապոլի

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Թիֆլիսի 4 հոկտեմբերի

Ժան-Ժակ Օրբելիանցի իր աղբիւր կտակած 70 միլիօնը շատ մարդկանց տեղի տուեց լրագրու-թեան մէջ հանդէս դուրս գալու, և այդ կտակած միլիօններին ժառանգ իրանց ճանաչելու, բայց մինչև ցայժմ այդ պարոնները ոչինչ չեն հոգա-ցել Ժան-Ժակի կտակը ձեռք բերելու համար, և նրա մտքին ծանօթանալու, թէ արդեօք նա որ տեղացի է, իր տոհմի որ ճիւղին է կտակել այդ միլիօնները: Ես, գալով Թիֆլիս, տեսնվեցայ այն պարոնի հետ, որի մօտ գտնվում է Ժան-Ժակի կտակի պատճէնը, և մասնաւորապէս կարողացայ

ասում եմ գոնէ մէկ անարդար խօսք, դուք գնդա-կահարեցէք ինձ հէց իմ տեղում իսկ կինը ապրում է սէրով, կամենում եմ ասել—տղամար-դի սէրով: Հասկանո՞ւմ էք արդեօք:

Կօլանկօն եւսանգով չարժեք դուրս: Մենք ա-մենքս լարված ուշադրութեամբ լսում էինք, մին-չև անգամ չունը բարձրացրեց իր արդէնային դուռը և նայեց զինուորի վրա:

—Ինձ թւում է, որ նա խօսում է ճշմարիտ, —ասեցի ես:—Ամեն ինչ հպատակում է անհրա-ժեշտութեան. երկրի վրա բոլոր ապրողները հաս-կանում են, թէ սքեքս անմիջապէս է իրանց կեանքը, այսուամենայնիւ, բոլորն էլ կատաղի կերպով մաքառում են այդ կեանքի համար թէ բնութեան հետ և թէ մարդիկների հետ: Մի այս-պիսի գոյութեան կռիւ ներկայացնում է մեզ սէ-րը, որ գտնվում է տղամարդի և կնոջ մէջ: Երկուսն էլ կամենում են երկարացնել իրանց կեանքը Ի-րանց դատակների մէջ, դատակների մէջ երկուսն էլ ցանկանում են նորից տեսնել իրանց զժադրու-թիւնը, իրանց աչքերը, իրանց հոգին: Երկուսն էլ ձգտում են, մէկը միւսին միջոցով, դառնալ աւելի կատարեալագործված էակներ, և երկուսն էլ կամե-նում են տիրապետել հակառակ սեռի գերազան-ցութիւնները: Բացի դրանից, կինը փափագում է ապրել թէ իր համար և թէ իր երեխայի համար իր ամուսնի միջոցով:—Ես չը գիտեմ, արդեօք կարո-ղացայ իմ միտքը արտայայտել:

This image shows a blank, aged, cream-colored page, likely an endpaper or flyleaf of a book. The paper has a slightly textured appearance with some minor discoloration and small brown spots, possibly due to age or handling. A dark, irregular stain is visible along the bottom edge of the page.

իւր կանոնադրութեան համեմատ վճարումը
զետք է սկսվէր մարտի 1-ին, բայց կարելի
է համարված հատուցանել յունվարի կեսին,
հաշուելով 5% տարեկան:

ՄՍՍԿԱՍ, 5 նոյեմբերի: Այսպէս Նա-
հանգական դատարանի մէջ նոյեմբերի 11-ին
ընդ սկսեն ընենլ դատաստանական գործը
ընթացողի առևտրական բանկի մէջ ծառա-
յող Վլասովի և ուրիշների ձեռքով 150,000
ռ. փանելու մասին:

ՍՍՄԱՐՍ, 5 նոյեմբերի: Յուրաք 5 $\frac{1}{2}$ % է,
եւ ձեռն չը կայ:

ՐԻԲՆԱՍԿ, 5 նոյեմբերի: Վոլգայի մէջ
ուրը 55 $\frac{1}{2}$ % վերշոկ բարձր է զրօխ: Տա-
քութիւնը 20: Մասնաւոր սեփականատէրերի
հանապարհօրդական շոգենաւերը դեռ ևս
ընթում են Ռիբնակի և Կոստրօմայի մէջ,
սակ «Սամօլէտ» ընկերութիւնը դադա-
նցրեց շոգենաւային հաղորդակցութիւնը:
ԿԱԶՍՆ, 5 նոյեմբերի: Յուրաք 4% է: Կա-
նա գետի վրա սառուց է լորում:

ՕԴԵՍՍԱ, 5 նոյեմբերի: «Շոգենաւային
ուսաց ընկերութիւնը» զաղարկեցում է
աւազնացութիւնը Դնեստր գետի վրա: Նա-
ագնացութեան ժամանակ նաւերով հաս-
րած է Օդէսսա մօտ 2 միլիօն պուդ հաց,
սակ երկաթուղով Վարնեցկի նաւահանգը-
րից տեղափոխված է մօտ 5 միլիօն պուդ,
երթէ 3 միլիօն պակաս անցեալ տարվա-
ից, հօւնձի վատութեան պատճառով: «Խօ-
ւօկօնակի» շոգենաւային ընկերութեանը
ժող է տուած նաւահանգիստներ և պա-
հիստներ կառուցանել Օդէսսայի, Սեվաս-
տօպօլի, Կերչի, Բաթումի և Անապի մէջ:

ԲԵՐԼԻՆ, 5 նոյեմբերի: Այսօր թագաթա-
անգը Սպանիա ուղևորվեցաւ:

ՓԱՐԻՋ, 5 նոյեմբերի: Կուրիէն անուշով
ի մարդ, որ պատկանում է անիշխանական
ուսակցութեանը, երէկ ընկղվելը ձեռքին
երա ընկաւ միւնիստրների խորհուրդի դահ-
ձը, կամեալով սպանել միւնիստր նախա-
հին: Բայց այդ փորձը չաջողվեցաւ, ո-
ովհետեւ այդ ժամանակ Ֆէրրի սենա-
ումն էր: Դռնապաններից բռնված Կուրիէն
ըստանեց, որ «Լիլի» գաղտնի ընկերու-
թիւնը յանձնել է նրան սպանել Ֆէր-
րին:

ԼՈՆԴՈՆ, 5 նոյեմբերի: Զինացիները կեն-
րօնացնում են Կանտօնի մէջ նշանաւոր
ժեր սե գրօշակների արշաւանքին ընդդի-
նադրելու համար, երբ Ֆրանսիացիները նը-
անց կարտաքսեն Տօնկինից:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 6 նոյեմբերի: Երէկ պե-
տական կայքերի միւնիստրը Ս. Պետերբուրգ
երադարձաւ:

ԼՈՆԴՈՆ, 6 նոյեմբերի: Շանիայից հա-
որդում են, որ խանկօուի մէջ 20000 կա-
նաւորներ են հաւաքում: Ի նկատի ունե-
ալով, որ Զինաստանի և Ֆրանսիայի մէջ
արող է պատերազմ ծագել:

ՓԱՐԻՋ, 6 նոյեմբերի: Գննութենից երե-
աց, որ միւնիստր նախագահին սպանել
անխցող Կուրիէն խնդարված է, ոչլ
ի Ֆանատիկոս է, որ եռանդով այցելում էր
նիշխանականների ժողովները Լիլի և Բու-
էի մէջ:

Կ. ՊՈԼԻՍ, 6 նոյեմբերի: Նախկին մեծ-վի-
եր Սավֆետ-փաշա փախճանվեցաւ:

ԲԵՂԳՐԱԴ, 6 նոյեմբերի: Բօլշեվիցի շրջա-
նի մէջ ծագած ապստամբութեան զլխա-
որները՝ քահանայ Միլաիչ, ուսուցիչ Պօր-
ուլօյիչ և մի զինվացի դատապարտված
են մահուան պատժի:

